ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» 12 2013թ. Թիվ 79-Ն

## ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ /ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ ՕՏԱՐՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 7.1 կետով.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի սեփականությունն համարվող գույքի /շենքեր և շինություններ/ օտարման 2014 թվականի հնարավոր ցանկը /հավելված թիվ 1/:

Ավետիսյան Հերմոն
Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ
Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված թիվ 1
Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու
2013թ. դեկտեմբերի 24-ի թիվ 79-Ն որոշման

# Ց Ա Ն Կ

----------------

Արարատի մարզի Արտաշատ քաղաքային համայնքի սեփականությունը համարվող գույքի /շենքեր և շինություններ/ 2014թ. օտարման.

1. Արտաշատ քաղաքի Աճառյան փողոցի թիվ 44/4 հասցեում գտնվող քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող „Իսակով„ նախկին խորհրդային տնտեսության նախկին մանկապարտեզի ընդհանուր տարածքից 46,4 քմ տարածք /հարմարեցված բնակարան/:
2. Արտաշատ քաղաքի Լուսինյան փողոցի վրա գտնվող քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող նախկին պատանի տեխնիկների կայանի շենքը:
3. Արտաշատ քաղաքի Շահումյան փողոցի թիվ 7 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 24 ա հասցեում գտնվող 13,6 քմ ոչ բնակելի տարածք:
4. Արտաշատ քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, որպես առանձին գույքային միավոր առանձնացված Իսակով 63/1 հասցեում գտնվող 166,1 քմ հողատարածքը, բնակարանը, խոհանոցը և թոնրատունը:
5. Արտաշատ քաղաքի Շահումյան փողոցի թիվ 2՝ 4/1 հասցեում գտնվող 13,13 քմ հարմարեցված բնակարանը /հանրակացարանը/:
6. Արտաշատ քաղաքի Մարքսի փողոցի թիվ 7 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 15 բնակարանը:
7. Իսակով փողոցի թիվ 113 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 30 բնակարանը:
8. Արտաշատ քաղաքի Մխչյան փողոցի թիվ 119/6 ա հասցեում գտնվող կիսանկուղային հարկում գտնվող ոչ բնակելի 90,1 քմ տարածքը:
9. Արտաշատ քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Վ.Արտաշատ խճուղի թիվ 7 հասցեում գտնվող շինությունը /նախկին ավտոկանգառ/:
10. Դուրյան փողոցի թիվ 10 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 17 բնակարանը:
11. „Արտաշատ քաղաքի օլիմպիական հերթափոխի ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց„ ՀՈԱԿ-ի շենքին կից թիվ 5 նախկին կաթսայատան ծխատար խողովակը:

ԲԿՏՏԱՄ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա.ԽՄՐԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» 12 2013թ. Թիվ 80-Ն

## ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1.1. կետով.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի սեփականությունը համարվող հողամասերի օտարման 2014 թվականի հնարավոր ցանկը /հավելված թիվ 1/:

Ավետիսյան Հերմոն
Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ
Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
[illegible]յան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված թիվ 1
Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու
2013թ. դեկտեմբերի 24-ի թիվ 80-Ն որոշման

# Ց Ա Ն Կ

---

Արարատի մարզի Արտաշատ քաղաքային համայնքի սեփականությունը համարվող բնակավայրի և գյուղատնտեսական նշանակության հողամասերի 2014թ. օտարման.

1/ համայնքային սեփականության իրավունքով պատկանող Ս.Հակոբյան փողոցի վրա գտնվող բնակելի և հասարակական կառուցապատման համար 630 քմ մակերեսով թվով 8 միավոր հողամասեր.

2/ Համայնքային սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերից 10 հա հողատարածք:

ՃՔՀ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Կ.ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» 12 2013թ.                                                  Թիվ 81

## ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետով.

**Քաղաքային համայնքի ավագանին** Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արտաշատի քաղաքային համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Ավետիսյան Հերմոն
Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ
Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ. ՄԻՐՔԱՂՅԱՆ

Հավելված
Արտաշատ քաղաքային համայնքի
ավագանու 2013թ. դեկտեմբերի 24-ի
թիվ 81 որոշման

# ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը կազմված է „Քաղաքաշինության մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի և „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի համաձայն, Արտաշատ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության առանձնահատուկ խնդիրները կանոնակարգելու նպատակով՝ քաղաքաշինության բնագավառի նորմատիվ-իրավական ակտերին համապատասխան:

2. Սույն կանոնադրության գործողությունը տարածվում է Արտաշատ համայնքի տարածքում գտնվող քաղաքաշինական գործունեության բոլոր օբյեկտների վրա՝ անկախ սեփականության իրավունքի սուբյեկտներից:

3. Եթե Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերի և /կամ/ Արտաշատ համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծով սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների կանոնակարգման վերնաբերյալ սահմանված են այլ նորմեր, ապա գործում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերով և /կամ/ գլխավոր հատակագծով սահմանված նորմերը:

4. Սույն կանոնադրութմաբ սահմանված առանձին նորմերը համայնքի ավագանու որոշմամբ կարող են վերանայվել և փոփոխվել՝ Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով համապատասխան խնդիրների կանոնակարգման վերաբերյալ այլ նորմեր սահմանելու դեպքերում:

## ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ

5. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերը, ըստ օգտագործման բնույթի, կառուցապատման իրավունքով կարող են տրամադրել հետևյալ ժամկետներով՝

ա/ բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման բակային տարածքներում ավտոտնակների տեղադրման համար՝ 30 տարի ժամկետով, հասարակական նշանակության կառույցներ տեղադրման համար՝ 20 տարի ժաամկետով, արտադրական նշանակության կառույցների տեղադրման համար՝ 20 տարի ժամկետով.

բ/ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում /զբոսայգի, պուրակ/ հասարակական նշանակության /կրպակ. մանկական սրճարան-տաղավար, խաղասրահ, ատարակցիոն/ օբյեկտների տեղադրման համար 20 տարի ժամկետով,

գ/ փողոցների կարմիր գծերին անմիջականորեն հարող /կառուցապատման ուղղությամբ/ տարածքներում՝ հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների տեղադրման համար՝ 15 տարի ժամկետով:

6. Կառուցապատման իրավունքի տրամադրման համար սահմանվում են վճարների հետևյալ չափերը՝

ա/ բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման բակային տարածքներում ավտոտնակների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի չափով, հասարակական նշանակության կառույցների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի եռապատիկի չափով, արտադրական նշանակության կառույցների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի կրկնապատիկի չափով.

բ/ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում /զբոսայգի, պուրակ/ հասարակական նշանակության /կրպակ, մանկական սրճարան-տաղավար, խաղասրահ, ատտրակցիոն/ օբյեկտների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի եռապատիկի չափով.

գ/Օգոստոսի 23, Շահումյան, Մարքսի փողոցներին հարող հատվածներում հասարակական նշանակության օբյեկտների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի եռապատիկի չափով, արտադրական նշանակության կառույցների տեղադրման համար՝ սաահմանված նվազագույն վճարի կրկնապատիկի չափով, Իսակովի փողոցին հարող հատվածներում հասարակական նշանակության օբյեկտների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի կրկնապատիկի չափով, արտադրական նշանակության կառույցների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի 1.5-ապատիկի չափով, մնացած փողոցներին հարող տարածքներում՝ սահմանված նվազագույն վճարի չափով.

## ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

7. Փողոցներին հարող հատվածներում առևտրի, սպասարկման, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների տեղադրումը կարող է թույլատրել ավտոմեքենաների կայանատեղերի /զրպանիկների/ ձևավորումն ապահովելու պարագայում՝ ըստ օբյեկտի մեծության՝ ավտոմեքենաների նորմատիվային քանակի հաշվարկով:

8. Փողոցահայաց հատվածներում բնակելի, հասարակական և արտադրական նշանակության կառույցների քարե ցանկապատների /պարիսպների/ առավելագույն բարձրությունը սահմանվում է 1,2 մետր, մետաղական ցանցկեն ցանկապատերինը՝ 1,8 մետր: Սույն նորմը չի տարածվում հատուկ նշանակության /իրավական ռեժիմի/ օբյեկտների վրա:

Սույն կանոնադրության 6-րդ կետի „գ„ ենթակետում նշված փողոցներում պարիսպներ /ցանկապատեր/ կառուցելու պարագայում դրանց էսքիզային նախագծերը պարտադիր կարգով ենթակա են համաձայնեցման քաղաքապետի հետ;

9. Գյուղատնտեսական նշանակության հողերի ցանկապատումը թույլատրվում է միայն ցանցկեն մետաղական նյութերից՝ առավելագույնը 1,8 մետր բարձրությամբ:

10. Փողոցների կարմիր գծերից ներս ընկած հատվածներում արգելվում է ցանկացած կառուցապատում՝ բացառությամբ հասարակական տրանսպորտի կանգառների տաղավարների, փողոցների կահավորման և գիշերային լուսավորության էլեմենտների, ճանապարհային նշանների ճարտարապետական փոքր ձևերի, ավտոտրանսպորտի կայանման և շրջադարձի գրպանիկների: Նշված տարածքներում կարող են տեղադրվել նաև գովազդային վահանակներ, պայմանով, որ դրանք չխոչընդոտեն նորմատիվային տեսանելիության ապահովմանը:

11. Միջպետական նշանակության ավտոմոբիլային մայրուղիների երթևեկելի մասից մինչև 18 մետր հեռավորության վրա, հանրապետական նշանակության ավտոմոբիլային մայրուղիների երթևեկելի մասից մինչև 15 մետր հեռավորության վրա, ինչպես նաև տրանսպորտային հանգույցների տարածքներում արգելվում է ցանկացած տիպի շենքերի կառուցումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2404-Ն որոշմանը համապատասխան:

12. Սույն կանոնադրության 6-րդ կետի „գ„ ենթակետի առաջին մասում նշված փողոցների երթևեկելի մասերում հողային աշխատանքների իրականացումը թույլատրվում է ժամը 20-ից ժամը 8-ի միջակայքում՝ քաղաքապետի հետ համաձայնեցված ժամանակացույցին

համապատասխան: Բացառություն կարող են կազմել վթարային և արտակարգ իրավիճակներում կատարվող աշխատանքները:

13. Գովազդային վահանակների, ցուցանակների և ազդագրերի տեղադրումն իրականացվում է միայն քաղաքապետի կողմից համաձայնեցված սխեմաների կամ էսքիզների նախագծերի հիման վրա:

14. Բնակելի թաղամասերում թույլատրվում է այնպիսի տնայնագործական գործունեությամբ կամ արհեստներով զբաղվելը, որոնք չեն գերազանցում աղմուկի և վտանգավոր արտանետումների թույլատրելի մակարդակը:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Մինչև սույն կանոնադրության ուժի մեջ մտնելը Արտաշատ համայնքում կառուցապատման իրավունքով տեղադրված այն օբյեկտները, որոնք չեն համապատասխանում սույն կանոնադրության նորմերին, ենթակա չեն ընդլայնման և որևէ այլ ձևով վերակառուցման՝ մինչև կառուցապատման իրավունքի ժամկետի ավարտը: Նշված օբյեկտների նկատմամբ քաղաքաշինական գործունեություն կարող է իրականացվել միայն այն պարագայում, եթե գործունեության հետևանքով նվազում կամ վերանում է անհամապատասխանությունը սույն կանոնադրությամբ սահմանված նորմերի հետ, „Քաղաքաշինության մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 14.1 հոդվածին համապատասխան:

16. Սույն կանոնադրությամբ սահմանված կանոնները ենթակա են վերանայման Արտաշատի համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագիծը և գոտիավորման նախագիծը սահմանված կարգով հաստատվելուց հետո:

ՃՔՀ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Կ.ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» 12 2013թ. Թիվ 82

**2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ Արտաշատի քաղաքապետարանը հանդիսանում է „Կոմունալ տնտեսություն,, ԲԲԸ-ի բաժնեմասի 34,0 % բաժնետերը, իսկ „Կոմունալ տնտեսություն,, ԲԲԸ-ն հանդիսանում է տարածաշրջանի միակ մասնագիտացված կազմակերպությունը և ղեկավարվելով „Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև „Գնումների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետով.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել 2014թ. Արտաշատ քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների գնումը կատարել առանց հայտարարություն նախապես հայտարարելու բանակցային ընթացակարգով:

Ավետիսյան Հերմոն
Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ
Պողոսյան Գաբրիել
[illegible]յան Վաչագան
[illegible] [illegible]ազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» 12 2013թ. Թիվ 83-Ն

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՐՏԱՇԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. հոկտեմբերի 10-ի՝ „Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ կատարելու դեպքերը և կարգը սահմանելու մասին„ թիվ 1283-Ն որոշումը, ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով.

**Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Արտաշատի տարածքային բաժնի կողմից, աշխատավայրից դուրս ամուսնության պետական գրանցումը համապատասխան վայրում հանդիսավոր պայմաններում կատարելու համար սահմանել 25000 /քսանհինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար:
2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Արտաշատի տարածքային բաժնի աշխատավայրից դուրս ամուսնության պետական գրանցումները կատարել շաբաթվա բոլոր օրերին՝ մինչև ժամը $20^{00}$-ն:

Ավետիսյան Հերմոն
Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ
Ղազարյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Նազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» 12 2013թ. Թիվ 84-Ն

## ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի դրույթներով.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ի Մ Է՝

1. Հաստատել Արտաշատի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեն՝

| | 2014 թ. նախատեսվող | 2013թ. հաստատված | 2012 թ. փաստացի |
|---|---|---|---|
| - Սեփական եկամուտների գծով | 276530,3 հ.դ. | 411328,1 հ.դ. | 214267,9 հ.դ. |
| - Ծախսերի գծով | 623994,7 հ.դ. | 754801,2 հ.դ. | 529683,8 հ.դ. |
| - Դոտացիա | 282024,3 հ.դ. | 295350,4 հ.դ. | 267933,6 հ.դ. |
| - Սուբվենցիա և այլ հատկ. | 65440,1 հ.դ. | 42931,2 հ.դ. | 33757,2 հ.դ. |
| - Մնացորդ առ. 1.01. | - | 5191,5 հ.դ.. | 16379,4 հ.դ. |
| **Ընդամենը եկամուտներ** | 623994,7 հ.դ. | 754801,2 հ.դ. | 534863,3 հ.դ. |

2. Հաստատել Արտաշատի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի եկամուտները, ըստ առանձին եկամուտների աղբյուրների /կցվում է եկամուտների վերաբերյալ հավելվածը/:
3. Հաստատել Արտաշատի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի հատկացումների /ծախսերի / բացվածքները /կցվում են ծախսերի վերաբերյալ հավելվածները/:

Ավետիսյան Հերմինե
Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան

Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ
Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
Կարապետյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ. ՄՈՒՔԱՂՅԱՆ

## ՀՀ ԱՐԱՐԱՏի ՄԱՐԶ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հազ.դրամ

| | | | |
|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | 623994.676 |
| | ՀԱՐԿԱՏԵՍԱԿ | Հ/Հ | ԳՈՒՄԱՐ |
| | Համայնքի բյուջե մուտքագրվող գույքահարկ | | 88000.0 |
| | Գույքահարկ կազմակերպություններից հմմայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 900415151035 | 25000.0 |
| | Գույքահարկ անհատ ձեռնարկատերերից և քաղաքացիներից փոխադրամիջոցների համար | 900415151043 | 36000.0 |
| | Գույքահարկ անհատ ձեռնարկատերերից և քաղաքացիներից համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 900415151480 | 23000.0 |
| | Գույքահարկ կազմակերպություններից փոխադրամիջոցների համար | 900415151498 | 4000.0 |
| | Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար | | 25100.0 |
| | Գյուղատնտեսական նշանակության հողի համար | 900415151019 | 21100.0 |
| | Ոչ գյուղատնտեսական նշանակության հողի համար | 900415151027 | 4000.0 |
| | Պետական տուրքեր | | 18500.0 |
| | Քաղաքացիական կացության ակտերի գրանցման,դրանց մասին քաղ.կրկն. վկայականներ.քաղ. կացութ.ակտերում կատ.գրառ.փոփոխ.,լրաց.,ուղղում,կատ.նվերականգման կապակց. վկայականներ տալու համար | 900415151274 | 6000.0 |
| | Նոտարական գրասենյակների կողմից նոտար. ծառայութ. կատարելու,փաստաթղթ. կրկնօր.տալու,նախագծ.և դիմում.կազմ.,փաստաթղթ.պատճ. հանելու և քաղվածք. տալու համար | 900415151191 | 12500.0 |
| | Մուտքեր պետական ձեռնարկությունների և գույքի վարձակալությունից | | 9626.0 |
| | Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներ | 900415151076 | 1247.0 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական | | |

| | | | |
|---|---|---|---|
| | նշանակության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող | | |
| | Համայնքի սեփականություն հանդիսացող ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարների | 900415151340 | 2254.0 |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 900415151142 | 6125.0 |
| | Մուտքեր վարչական իրավախախտումների համար տուգանքներից և պատժամիջոցներից | 900415151472 | 400.0 |
| | Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ | | 347464.4 |
| | Ընթացիկ տարվա ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա | 900415151100 | 282024.3 |
| | Այլ դոտացիա | 900415151415 | |
| | ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի կորուստների փոխհատուցում | 900415151530 | |
| | Սուբվենցիա | 900415151373 | 2750.0 |
| | Ընթացիկ սուբվենցիա | 900415151449 | 62690.1 |
| | | | |
| | Տեղական տուրքեր | | 15911.0 |
| | -Հիմնական շինությունների շին. թույլտվություն | 900415151316 | 800.0 |
| | -Մինչև 20 Ք.մ մակերես ունեցող օբյեկտների համար | 900415151324 | 10.0 |
| | -20 Ք.մ և ավելի մակերես ունեցող օբյեկտների համար | 900415151332 | 20.0 |
| | -Շենքերի, շինությունների վերակառուցման թույլտվություն | 900415151282 | 40.0 |
| | -Շինությունների քանդման թույլտվություն | 900415151241 | 50.0 |
| | -Ծխախոտի վաճառքի թույլտվություն | 900415151217 | 2380.0 |
| | -Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն | 900415151233 | 2394.0 |
| | -Բացօթյա առևտուր | 900415151266 | 300.0 |
| | -Հեղուկ գազի վաճառք | 900415151258 | 1050.0 |
| | -Վառելիքաքսայուղային նյութերի վաճառք | 900415151118 | 1850.0 |
| | -Ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվություն | 900415151464 | 250.0 |
| | -Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն | 900415151381 | 6000.0 |
| | -Տաքսի ծառայության թույլտվություն | 900415151308 | 255.0 |
| | -Հանրային սննդի կազմակերպում | 900415151522 | 312.0 |
| | -Թանկարժեք մետաղների վաճառք | 900415151456 | 200.0 |
| | Տեղական վճարներ | | 1310.0 |
| | -Աճուրդ վաճառք կազմակերպելու | 900415151126 | 540.0 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| | -Շինարարության ավարտը փաստագրելու | 900415151167 | 220.0 |
| | -Չափագրման ծառայություն | 900415151290 | |
| | -Շինարարության տեսքը փոփոխելու | 900415151407 | 450.0 |
| | ՔԿԱԳԲ-ի կողմից աշխատավայրից դուրս գրանցումներ | | 100.0 |
| | Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցների | | |
| | Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցների Անասնաբույժ, ՔԿԱԳԲ | 900415151175<br>900415151183 | 2749.6 |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող/գանձվող/ այլ վճարներ<br>Աղբահանության վճարներ | 900415151514 | 15000.0 |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող/գանձվող/ այլ վճարներ , ինքնակամ շինությունների օրինականացում | 900415151159 | 600.0 |
| | Համայնքի տարածքում տրանսպորտ. Միջոցների կայանման տեղական հարկեր | | |
| | -Այլ եկամուտներ | 900415151092 | 1000.0 |
| | Կապիտալ գործառնություններից եկամուտներ | | 98333.676 |
| | Հողի օտարումից եկամուտներ | 900415151068 | 88333.676 |
| | Այլ հիմն. Միջոցների օտարումից մուտքեր | 900415151209 | 10000.0 |
| | Վարչ. Բյուջեի պահուստ. Ֆոնդից ֆոնդ. Բյուջե կատարվող հատկացումներ | 900415151134 | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.Ս[illegible]ԱԴՅԱՆ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՑՎԱԾՔ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

| Ուղղ-ներ | 4111 / 4112 | 4212 / 4211 | 4213 / 4657 | 4214 | 4221 / 4222 | 4232 / 4215 | 4234 | 4235 / 4237 | 4239 / 4216 | 4241 | 4251 | 4252 | 4261 / 4637 | 4264 / 5121 | 4267 / 4269 | 4729 / 4511 | 4822 / 4823 | 5113 / 5112 | 5122 / 5134 | 5129 / 5121 | 4639 / 4819 | 4891 | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | աշխատա-վարձ / խրախուս. միջոցներ | Էներգետիկ ծառ.-ներ / Գործառնական և բանկային ծառայությունների ծախս | կոմունալ ծառ.-ներ / Այլ կապի տալ դրա մաշնորհներ | կապի ծառ-ներ | ներք. գ/ծուղ / արտ. գ/ծուղ | համակարգչային ծառ. / ապահով ագր. ծախսեր | տեղեկա-տվական ծառ.-ներ | կառավարչական ծառ. / Ներկայացուցչական ծախսեր | ընդհանուր բնույթի այլ ծառ-ներ / գույքի և սարք. Վարձ. | մասնագիտական ծառայություններ | շենքերի և կառույց. ընթացիկ նորոգ. և պահպանում | մեքենաների և սարքավորում. ընթ.նորոգում և պահպ. | գրասեն. Նյութեր / ընթացիկ դրամաշնորհներ | տրանսպորտ. նյութեր / տրանս սարքավորում. | կենցաղ. նյութեր / հատուկ նպատակային այլ նյութեր | այլ նպաստ. բյուջեից / սուբսիդ. ոչ ֆինանս. Պետ.կազմակերպ. | այլ հարկեր / պարտադիր վճարներ | շենք. և շինութ. Կապիտ. վերանոր. / շենք. և շինութ. Կառուց. | վարչ. սարքավորում. / նախագծահետազոտ. ծախսեր | այլ մեք.և սարք. / տրանս. սարքավորումներ | այլ ընթ. դրամաշնորհներ / նվիրատվություններ այլ շահ.չհետ | պահուստային միջոցներ | |
| Կառավար. մարմնի պահպանում | 82805,0 | 9000,0 / 200,0 | 1250,0 | 3900,0 | 100,0 | 600,0 / 200,0 | 700,0 | 300,0 / 500,0 | 200,0 | | | | 950,0 | 3100,0 | 400,0 / 250,0 | | 100,0 | | 3000,0 | | | | 107555,0 |
| ՔԿԱԳԲ | 2320,0 | 226,8 | | 132,6 | | | | | | | | | 70,2 | | | | | | | | | | 2749,6 |
| Դիմումներ և հայցադիմումներ | | | | | | | | | | | | | | | | | 500,0 | | | | | | 500,0 |
| Մշակույթ. մ/ջ իրակա նացում | | | | | | | | | 200,0 | | | | | | 700,0 | | | | | | | | 900,0 |
| Ա/Լ ցանցի շահ. և պահ պանում | | 5000,0 | | | | | | | | | 3600,0 | | | | | | | | | | | | 8600,0 |
| ախտահան. միջատա-զերծ. ծառ. /դեռատիզ./ | | | 200,0 | | | | | | | | | | | | | | | | | | | | 200,0 |
| սան. Մաքրում | | | 52250,0 | | | 100,0 | | | | | | | | | | | | | | | | | 52350,0 |
| կանաչ տարածք. պահպան. | | | 6000,0 | | | | | | | | | | | | | | | | | | | | 6000,0 |
| ոչ առևտր. կազմա կերպութ. | | | | | | | | | 320509,1 | | | | | | | | | | | | | | 320509,1 |
| Ասֆալտ բետ. ծածկի հիմն ./նախորդ տարիների պարտք | | | | | | | | | | | | | | | | | | 68915,816 | | | | | 68915,816 |
| Ա/Լ ցանցի հիմնանորո-գում | | | | | | | | | | | | | | | | | | 2000,0 | 300,0 | | | | 2300,0 |

| Ոլորտ-ներ | 4111 / 4112 | 4212 / 4211 | 4213 / 4657 | 4214 | 4221 / 4222 | 4232 / 4215 | 4234 | 4235 / 4237 | 4239 / 4216 | 4241 | 4251 | 4252 | 4261 / 4637 | 4264 / 5121 | 4267 / 4269 | 4729 / 4511 | 4822 / 4823 | 5113 / 5112 | 5122 / 5134 | 5129 / 5121 | 4639 / 4819 | 4891 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| գույքի նկատմամբ իրավունքի գրանցում | | | | | | | | | | 500,0 | | | | | | | 500,0 | | | | ——— | | 1000,0 |
| ա/բ ծածկի վերանոր. և պահպանում | | | | | | | | | | | 1000,0 | | | | | | | | | | | | 1000,0 |
| սոց. անապահով անձանց աջակցութ-յուն | | | | | | | | | | | | | | | | 1000,0 | | | | | | | 1000,0 |
| պահուստային ֆոնդ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | 26297,3 / 10000,0 | 36297,3 |
| կենսաբազ. և բնության պաշտպա-նություն/նախորդ տարիների պարտք | | | | | | | | | | | | | | | | | | 9517,86 | | | | | 9517,86 |
| հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում | | | | | | | | | | | | | | | | | | 1500,0 | 100,0 | | | | 1600,0 |
| Սան. Մաքրում | | | | | | | | | | | | | | | | | | | | 3000,0 | — | | 3000,0 |
| ընդա-մենը | 85125,0 | 14226,8 / 200,0 | 59700,0 | 4032,6 | 100,0 | 600,0 / 300,0 | 700,0 | 300,0 / 500,0 | 320909,1 | 500,0 | 4600,0 | | 1020,2 | 3100,0 | 400,0 / 950,0 | 1000,0 | 1100,0 | 78433,676 / 3500,0 | 3000,0 / 400,0 | 3000,0 | ——— | 26297,3 / 10000,0 | 623994,676 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ_________________ Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՖՀՀ ԲԱԺՆԻ ՊԵՏ_________________ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

**2014 ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ**

1. Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից մուտքեր ______________ 10 000 000 դրամ
2.Համայնքի սեփականություն համարվող հողի օտարումից մուտքեր______________ 88 333 676 դրամ
4. վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը______________ Դրամ
5, Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը______________ Դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ______________ 98 333 676 Դրամ

Ծախսային մաս

դրամ

| ՀԱՏՎԱԾ | ՀՈԴՎԱԾ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 5111 շենք. և շինութ. ձեռք բերում | 5112 շենքերի և շինութ. կառուցում | 5113 շենքերի և շինութ. կապիտալ վերանորոգ. | 5121 տրանսպոր-տային սարքավո-րումներ | 5122 վարչ. սարքավո-րումներ | 5129 այլ մեք.և սարքա-վորումներ | 5134 նա-խագծահե-տազոտ ծախսեր | 4891 պահուստայի ն ֆոնդ | ԸՆԴԱՄԵՆԸ |
| Կառ. մարմն. պահպան. | | | | | 3 000 000 | | | | 3 000 000 |
| կենսաբազ.ր բնության պաշտպանություն | | | 9 517 860 | | | | | | 9 517 860 |
| հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում | | 1 500 000 | | | | | 100 000 | | 1 600 000 |
| Ասֆալտ բետոնյա ծածկի հիմնանորոգում | | | 68 915 816 | | | | | | 68 915 816 |
| պահուստային ֆոնդ | | | | | | | | 10 000 000 | 10 000 000 |
| Ա/Լ ցանցի հիմնանորոգում | | 2 000 000 | | | | | 300 000 | | 2 300 000 |
| Սան մաքրում | | | | | | 3 000 000 | | | 3 000 000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 3 500 000 | 78 433 676 | | 3 000 000 | 3 000 000 | 400 000 | 10 000 000 | 98 333 676 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ __________ Գ. ՄՈՒԽԱՐՅԱՆ

ՖՀՀ ԲԱԺՆԻ ՊԵՏ __________ Լ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

## ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2014թ. ԾԱԽՍԵՐԻ ԲԱՑՎԱԾՔ

| ԱՆՎԱՆՈՒՄ | խմբերի քանակը | բաժին խումբ, դաս | 2014թ ՊԼԱՆԸ | ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV |
| թիվ 1 մանկապ. | 5 | 09-01-01-51 | 25000,0 | 6300,0 | 12600,0 | 18900,0 | 25000,0 |
| թիվ 3 մանկապ. | 5 | " | 24868,0 | 6250,0 | 12500,0 | 18750,0 | 24868,0 |
| թիվ 4 մանկապ. | 7 | " | 28000,0 | 7000,0 | 14000,0 | 21000,0 | 28000,0 |
| թիվ 5 մանկապ. | 6 | " | 25500,0 | 6400,0 | 12800,0 | 19200,0 | 25500,0 |
| թիվ 6 մանկապ. | 3 | " | 15300,0 | 3900,0 | 7800,0 | 11700,0 | 15300,0 |
| թիվ 7 մանկապ. | 3 | " | 15000,0 | 3750,0 | 7500,0 | 11250,0 | 15000,0 |
| թիվ 8 մանկապ. | 4 | " | 21736,0 | 5500,0 | 11000,0 | 16500,0 | 21736,0 |
| ընդամենը մանկապար. | | | **155404,0** | **39100,0** | **78200,0** | **117300,0** | **155404,0** |
| ԱԱԿ | | 09-05-01-51 | 31200,0 | 7800,0 | 15600,0 | 23400,0 | 31200,0 |
| երաժշտ.դպրոց | | " | 26630,0 | 6657,5 | 13315,0 | 19972,5 | 26630,0 |
| գեղարվեստի դպ | | " | 6142,0 | 1535,5 | 3071,0 | 4606,5 | 6142,0 |
| ՕՀ մարզադպրոց | | " | 38057,0 | 9514,3 | 19028,5 | 28542,0 | 38057,0 |
| Համալիր մարզ. | | " | 32500,0 | 8125,0 | 16250,0 | 24375,0 | 32500,0 |
| գրադան | | 08-02-01-51 | 10271,1 | 2568,0 | 5135,7 | 7703,7 | 10271,1 |
| Շ. Ազնավուր | | 08-05-01-51 | 15075,0 | 3768,0 | 7536,0 | 11304,0 | 15075,0 |
| ընդամենը մշակույթ | | | **159875,1** | **39968,3** | **79936,6** | **119904,9** | **159875,1** |
| հուղարկավոր-ման ծառ. | | 04-09-01-52 | 5230,0 | 1307,5 | 2615,0 | 3922,5 | 5230,0 |
| **Ընդամենը** | | | **320509,1** | **80375,8** | **160751,6** | **241127,4** | **320509,1** |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՖՀՀ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ